

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»**  
**ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**  
**31.08.2020-ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

2020 թվականի օգոստոսի 31-ին, ժամը 11<sup>00</sup> –ին, «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Ալեք Մանուկյան 11) տեղի ունեցավ գիտական խորհրդի հերթական նիստը (այսուհետ՝ նիստ):

Նիստը նախագահում էր Գիտական խորհրդի նախագահ՝ Դավիթ Խիթարյանը, նիստին մասնակցում էին 34 անդամներից 30-ը:

(Մասնակիցների գրանցացուցակը կցվում է):

Նիստին առցանց եղանակով (zoom հարթակով) մասնակցում էին անդամներ՝ Լիլիթ Մկրտչյանը, Սոֆյա Առուշանյանը, Վիգեն Վիրաբյանը, Արման Ավետիսյանը:

Նիստից բացակայում էին՝ Անի Բաղյանը, Դավիթ Սարգսյանը, Սաթենիկ Սիմոնյանը, Մարիամ Աղաբաբյանը:

Ապահովված էր նիստի քվորումը:

Գիտական խորհրդի նախագահը անդամներին ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց այն հաստատել:

Նիստն արձանագրեց իրավական ապահովման բաժնի իրավախորհրդատու՝ Վ. Ավագիմյանը:

### **ՕՐԱԿԱՐԳ**

1. Նիստի օրակարգի հաստատում:
2. Ինստիտուտի շրջանավարտներ՝ Արմեն Լյուդվիգի Նազարյանին (հունահռոմեական ոճի ըմբշամարտիկ), Լևոն Գրիգորի Արոնյանին (շախմատիստ, գրոսմայստեր), Հենրիխ Համլետի Մխիթարյանին (ֆուտբոլիստ), Վահան Շաքարյանին պատվավոր պրոֆեսորի կոչումներ շնորհելու առաջարկ:

Զեկուցող՝ ռեկտորի պաշտոնակատար՝ Դավիթ Խիթարյան

3. Գիտական խորհրդի կազմի փոփոխությունների հաստատում

Զեկուցող՝ ռեկտորի պաշտոնակատար՝ Դավիթ Խիթարյան

4. Առարկայական ծրագրերի, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերի հաստատում

Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Գագիկ Սարգսյան

5. Ինստիտուտի 2020/2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգի հաստատում

Ձեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Գագիկ Սարգսյան

6. Գիտահամակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կանոնակարգի հաստատում

Ձեկուցողներ՝ Իրավական ապահովման բաժնի ղեկավար՝ Օֆելյա Պետրոսյան

Գիտահամակարգող խորհրդի նախագահի պարտականությունները կատարող՝  
Ֆրունզ Ղազարյան

7. Ռազմավարական ծրագրի մշակման, մշտադիտարկման, գնահատման եվ վերանայման քաղաքականության և ընթացակարգի հաստատում

Ձեկուցողներ՝ Իրավական ապահովման բաժնի ղեկավար՝ Օֆելյա Պետրոսյան

8. Առարկայական պլանների հաստատում

Ձեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Գագիկ Սարգսյան

9. Ուսումնական ժամանակացույցերի հաստատում

Ձեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Գագիկ Սարգսյան

10. Այլ հարցեր

1" Նիստի նախագահող՝ Դավիթ Խիթարյանը օրակարգը դրեց քվեարկության

Կողմ՝ 30, դեմ՝ 0:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին նիստի օրակարգը:

**2.Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց՝** ռեկտորի պաշտոնակատար Դավիթ Խիթարյանը և առաջարկեց Ինստիտուտի 75 ամյակի կապակցությամբ Ինստիտուտի շրջանավարտներ Արմեն Լյուդվիգի Նազարյանին (հունահռոմեական ոճի ըմբիշ), Լևոն Գրիգորի Արոնյանին (շախմատիստ, գրոսմաստեր), Հենրիխ Համլետի Մխիթարյանին (ֆուտբոլիստ), Վահան Շաքարյանին (Գիտությունների դոկտոր պրոֆեսոր) շնորհել պատվավոր պրոֆեսորի կոչում:

Առաջարկը դրվեց քվեարկության:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին առաջարկը:

**3. Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց** ռեկտորի պաշտոնակատար Դավիթ Խիթարյանը և առաջարկեց գիտական խորհրդի կազմում կատարել փոփոխություն: Գիտական խորհրդի

կազմի փոփոխման անհրաժեշտությանը պայմանավորված է երկու հանգամանքով առաջինը՝ օրենսդրական կարգավորումները, որի համաձայն սպորտի հոգաբանություն և կինեզիոլոգիա մասնագիտություններով հետբուհական կրթության կազմակերպման համար անհրաժեշտ է, որ գիտական խորհրդի կազմում բացի ուսանողներից մնացած 80 տոկոսը պետք է լինեն գիտական կոչում և աստիճան ունեցող անձինք, որից 40 տոկոսը դոկտորներ կամ պրոֆեսորներ, իսկ երկրորդ հանգամանքը այն է, որ 01.09.2020թ.-ին հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կառուցվածքը մտնում է ուժի մեջ և ամբիոնի վարիչների ժամանակավոր պաշտոնակատարները ի պաշտոն ընդգրկվում են գիտական խորհրդի կազմում մինչև հիմնական ընտրությունները, բացառությամբ ցիկլիկ մարզաձևերի, քանի որ Սմբատյան Վարդանը հանդիսանում է հոգաբարձուների խորհրդի անդամ, և Ինստիտուտի կանոնադրության, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի համաձայն հոգաբարձուների խորհրդի անդամները չեն կարող լինել այլ խորհրդի կազմում. ուստի առաջարկվեց, որ Էրիկ Մարտիրոսյանը շարունակի մնալ գիտական խորհրդի կազմում, իսկ ուսանողական խորհրդի կողմից նույնպես ներկայացվեցին նոր թեկնածուներ:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Գագիկ Սարգսյանի կողմից հնչեց առաջարկ այն մասին, որ երկու կարևորագույն բաժիններ՝ ուսումնագիտական և որակի ապահովման բաժինները խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցեն գիտական խորհրդի նիստերին: Նիստի նախագահող Դ՝ Խիթարյանը ավելացրեց, որ ինչպես առաջարկված բաժինները, այնպես էլ իրավական ապահովման բաժինը կմասնակցեն խորհրդակցական ձայնի իրավունքով:

Նիստի նախագահ՝ Դ. Խիթարյանը առաջարկեց հաստատել գիտական խորհրդի կազմը՝ փոփոխություններով:

(Կազմի ցուցակը կցվում է)

Հարցը դրվեց քվեարկության:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին:

**4. Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ** ելույթ ունեցավ ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Գագիկ Սարգսյանը և ներկայացրեց առարկայական ծրագրերը, բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի մասնագրերը, որոնք մշակվել և համապատասխանեցվել

են հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից արված առաջարկներին, միևնույն ժամանակ նշվեց, որ փոփոխությունները վերաբերվելու են հետայսու կազմվող ծրագրերին:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց հաստատել:

Հարցը՝ դրվեց քվեարկության

Կողմ՝ 29, դեմ՝ 1:

Օրակարգի չորրորդ հարցն ընդունվեց:

**5. Օրակարգի հինգերորդ հարցը ներկայացրեց՝** ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Գագիկ Սարգսյանը և անդրադարձավ, որ համավարակի պայմաններում անհրաժեշտ է ուսումնական գործընթացը կազմակերպել համաձայն ԿԳՄՍ նախարարության ուղեցույցներով և պարետատան որոշումներով սահմանված կանոններին համապատասխան: Ինստիտուտի կողմից մշակված ընթացակարգը համապատասխանում է նշված ուղեցույցներին, որոշումներին և վերաբերվում է միայն առաջին կիսամյակին:

Ռեկտորի պաշտոնակատար՝ Դավիթ Խիթարյանի կողմից հնչեց առաջարկություն ընթացակարգում ավելացնել նաև ժամերը ըստ կուրսերի

(Ընթացակարգը կցվում է)

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց հաստատել ընթացակարգը:

Հարցը դրվեց քվեարկության:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին ընթացակարգը:

**6. Օրակարգի վեցերորդ հարցը ներկայացրեց՝** գիտահամակարգող խորհրդի նախագահի պարտականությունները կատարող՝ Ֆրունզ Ղազարյանը և իրավական ապահովման բաժնի ղեկավար՝ Օֆելյա Պետրոսյանը: Առաջարկությունով հանդես եկավ Աշոտ Չատինյանը և առաջարկեց ավելի հստակ նշել, թե ովքեր չեն կարող ընդգրվել կազմում:

Նոր կազմին ներկայացրեց գիտահամակարգող խորհրդի նախագահ՝ Ֆրունզ Ղազարյանը և ռեկտորի պաշտոնակատար Դավիթ Խիթարյանը: Առաջարկությունով հանդես եկավ Աշոտ Չատինյանը նշելով, որ կազմում մանկավարժական գիտությունների թեկնածուները պետք է ավելի շատ լինեն: Առարկություններ հնչեցին Լուսինե Ստեփանյանի և Դավիթ Խիթարյանի կողմից առ այն, որ ներկայացրած թեկնածուները իրենց գործունեությամբ միայն օգտակար են լինելու Ինստիտուտին, միևնույն ժամանակ կազմի հաստատումից հետո համաձայն ռեկտորի հրամանի կվարձատրվեն, ինչպես գրախոսները այնպես էլ արտասահմանյան պարբերականում հրապարակումներ ունեցողները:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց հաստատել կազմը, կանոնակարգը փոփոխություններ կատարելու պայմանով:

(Կանոնակարգը և խորհրդի կազմը կցվում են)

Հարցը դրվեց քվեարկության

Կողմ՝ 29, դեմ՝ 1:

Կանոնակարգը և նոր կազմը հաստատվեց:

**7. Օրակարգի յոթերորդ հարցը ներկայացրեց իրավական ապահովման բաժնի ղեկավար՝**

**Օֆելյա Պետրոսյանը:** Անդրադառնալով ռազմավարական ծրագրի մշակման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման քաղաքականության ընթացակարգի ընդունման անհրաժեշտությունը նշեց, որ այն պայմանավորված է նոր 2021-2025 ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների, ինչպես նաև նախորդ ռազմավարական ծրագրի վերլուծության համար: Միաժամանակ հայտնեց, որ քննարկման ընթացքում ներկայացված կարծիքները արդեն հաշվի են առնվել:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց հաստատել ընթացակարգը

Հարցը դրվեց քվեարկության:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին ընթացակարգը:

**8. Օրակարգի ութերորդ և իններորդ հարցերը ներկայացրեց ուսումնագիտական գծով**

**պրոռեկտոր՝ Գագիկ Սարգսյանը** ուսումնական պլանների և ժամանակացույցի հետ կապված Գագիկ Սարգսյանը նշեց, որ բուհում փոխվել են գրեթե բոլոր կրթական ուղղություններով ուսումնական պլանները, հաշվի են առնվել բարեփոխումները:

Ռեկտորի պաշտոնակատար Դավիթ Խիթարյանի կողմից հանձնարարական հնչեց որակի ապահովման բաժնին, հատկապես, ուշադրություն դարձնել այն ամբիոններին, որտեղ կատարվել են փոփոխություններ քանի որ դրանք պետք է միտված լինեն միայն առաջընթացին:

Նիստի նախագահ՝ Դ.Խիթարյանը առաջարկեց հաստատել ուսումնական պլանները և ժամանակացույցերը, վրիպակները վերացնելու պայմանով:

Հարցը դրվեց քվեարկության:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին:

**9"Այլ հարցերի** մեջ ռեկտորի պաշտոնակատար՝ Դավիթ Խիթարյանը առաջարկեց ընդգրկել ժամաքանակների փոփոխության վերաբեյալ հարցը և առաջարկեց ժամաքանակի ծավալի առավելագույն շեմը բացառիկ դեպքերում սահմանել մինչև 700 ժամ 350 մուտքով, նախկին 500 ժամ 250 մուտքի փոխարեն:

Սույն արձանագրությունը կազմված է 31.07.2020թ-ին և բաղկացած է 5 էջից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Դ. ԽԻԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Ա.ՉԱՏԻՆՅԱՆ